

ՀԵԶԸ ԵՐԾՈՒՅԹՆԵՐԻ

ԳԵՐԱԴԱՎՈՐ ԲԱՐԻԿԱԴԻԴԱՐԵԱՆ

Y

1851 թ., երբ Բարխուդարեանը Դորպատ հասաւ,
Դորպատի հայ ուսանողութեան ոսկէ դարն էր. Խաչա-
տուր Արավեանի ոգևորուած յորգորները Թիֆլիզում և
Ստեփանոս Նազարեանինը Մուկուլայում՝ յօգուտ Պար-
պատի, ի զուր չանցան: Թիֆլիզի հայ երիտասարդները
այնքան են ոգեսրում Դորպատի համալսարանի այն
ժամանակուայ գերմանական կրթութեամբ, որ շատերը
նոյն իսկ միջնակարգ դպրոցներից գուրս գալով Դոր-
պատ են գնում՝ պատրաստուելու և ապա համալսա-
րան մտնելու: Մուկուլայում Լազարեան ճեմարանի հայ
սաներից շատերը՝ թողնելով Մուկուլայի և Ռուսաստա-
նի ալլ համալսարանների լարմարութիւնները՝ շտապում
են Դորպատ: Այս գաղափարական հոսանքին հետևում
են նաև նոր նախիջևանցիները և այդպէսով 1851—
1852 թ. Դորպատի հայ ուսանողների թիւը հասնում
է 22-ի, որ շատ մեծ քանակութիւն է, ի նկատի ունե-
նալով լինսական թուականների Ռուսահայոց մտաւոր
կրթութեան հորիզոնը և միջնակարգ դպրոցների շատ
սահմանափակ թիւը:

Միջնադարեան թմրութիւնից հազիւ արթնացող հայ ժողովրդի ուսումնածարաւ զաւակները Դոբալատում յանկարծ ընկնում են գերմանական հաստրակութեան մէջ, որ Եւրոպական քաղաքակրթութիւն ունէր և թէ մտքի ու թէ կեանքի ձգտումներով բոլորովին տարբերուում էր կովկասեանժողովրդից: Գերմանացին ուր էլ որ լինի, թէ իւր հայրենիքում և թէ օտարութեան

^{*)} «Люмаси» 1902 № 1.

մէջ, միշտ իբրև սրբութիւն սրբոց է պահում՝ մայրենի լեզուն և հայրենիքի լիշտատակը:

Հայ ուսանողները գալով Դորպատ և ամեն մի քաղաքուխում այդ գաղափարների հետ ընդհարուելով՝ մնում են շուարած և ամօթահար. ոչ իրենց ժողովրդի լեզուն գիտեն և ոչ էլ իրենց հայրենիքի պատմութիւնը, միջնակարգ ուսումն էլ ստացել են ուրիշ լեզուով: Երջապատողների արհամարհանքից ազատ մնալու և իրանց այդ մթնոլորտի շնորհիւ հետզհետէ արթնացող ինքնաճանաչութեան զգացմանը բաւականութիւն տալու համար, հայ ուսանողները գերմաներէնի հետ զուգընթացաբար սովորում են և հայերէնը: Եւ կարծ ժամանակի ընթացքում շրջապատող գաղափարների ազդեցութիւնն այնչափ լայն ծառալով է տեղի ունենում հայ ուսանողների վրայ, և մայրենի նոր լեզուի, աշխարհաբարի կատարելագործման ձգտումն այնպիսի թուիչքներով է լառաջադիմում, որ մարդ կարծում է թէ ոչ թէ գերմանական, այլ հայկական համալսարանի ուսանողներ են. ամեն մի ուսանող երգիչը բանաստեղծ է դառնում, հայերէն ուսանողական երգեր յօրինում, հայրենի իսւերով ու վշտերով տոչորւմ: Մէկը (Փափագեանց) անցեալի լիշտակներն է վերականգնում. «Զձեզ որդիք Արամեան, կոչէ Հայաստան, զարթեալ, ասէ, ի քնոյ ինձ հանգիստ ոչ գոլ...»: Երկրորդը (Աւագեանց) երգում է. «Որդիք Հայկալ, գտիք ներկալ ձերոց զգացմանց. տէք արքայ, — լուարուք երգեմ զերգս հալոցա: Երբօրդն (Ուաֆալէլ Պատկանեան) ուրախ ուսանողական տրամադրութեամբ երգում է. «Իաժակներ առնունք, եղբարք, լիք լիք բաժակներ զինով», «Եղբարք, խմենք գինի հայ ազգի կենացը. չորրորդը (Քերովքէ Պատկանեան) նոյնպէս գերմանական հումորով երգում է. «Երք ծխաքաղս ձեռիս, սենեակումս նստած եմ»: «Կուամբամբուլին էս էս օդին է, որ մեզի քաջ ծանօթ է, որոյ չխմելը ուսանողին շատ մեծ ամօթ է»: Հինգերորդը (Դ. Միքիմանեան) պատանեկան կարօտով լիշտում է սեւաչեալ հայ օրիորդներին և թախիծով երգում. «Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մատաղ. երբ միտս էք գալիս, ա-

առւմ եմ ես — ախ: Ձեր սե սե աչեր, սե ունքով պատած, կարծես երկնալին զալամով քաշած»: Վեցերորդը (Դոդոխեան) պանդխտի թախիծով պատած վշտալի սըրտի որդիական կարօտն է հայրենիք ուղարկում՝ չուող ծիծեռնակի սիրուն թևերով և երգում: «Ծիծեռնակ, ծիծեռնակ, դու գարնան սիրուն թռչնակ, դէպի ուր ինձ ասա՝ թռչում ես արդպէս արագ: Ա՛խ, թռիր, ծիծեռնակ, ծնած տեղս Աշտարակ, անդ շինիր քո բունը հայրենի կտուրի տակ: Անդ հեռու ալեոր հայր ունիմ սգաւոր, որ միշտ իւր որդւոյ վրայ սդայ օրէցօր. երբ տեսնես դու նրան ինձնից շատ բարեւ արա, ասա թռող նստի լայ իւր անբաղդ որդու վերաբ: Եօթերորդը... սակայն բաւական է:

Իսկ ամբողջ խումբը միաբերան երգում է.

«Ով չգիտէ հայերէն, ոչ ճանաչէ նա զօրէնա:

Եթէ այս բոլորի վրայ աւելացնենք նաև այն հանգամանքը, որ Խաչատուր Արովեանի «Լէրք Հայաստանի»-ի մէկ ձեռագիր օրինակը ուսանող Գ. Աքիմեանի (Արովեանի նախկին աշակերտներից) մօտ գտնուելով՝ հայ ուսանողների խմբական ընթերցանութեան նիւթ էր գառնում, կարող ենք երևակայել թէ ալդ թարմ սրտերի ոգեսորութիւնն ինչ աստիճանի էր հասնում:

Ուսանողական ազատ ըռպէները նուիրում էին Զամչեանի, Ինձիճեանի, Եղիշէի, Խորենացու, Եզնիկի, Փաւստոսի, Տելեմաքի ընթերցման և ուսումնասիրութեան *): Հայերէն լաւ գիտեցողը սովորեցնում էր չըգիտեցողին, հին ուսանողը առաջնորդում էր նորեկին, հարուստը օժանդակում էր չքաւորին, ուրախը միիթարում էր վիշտ ունեցողին. մէկ խօսքով ընկերական սէրը կտապում էր զանազան տեղերից եկող երիտասարդներին և մի հոգի, մի շունչ կազմում, մի գաղտփարով ոգեսորում: Սակայն թող չկարծուի, թէ հայ

*.) Սահցում էին նորնպէս «Արծիւ Վասպուրական», «Արշալոս Արարատեան», «Ազգասէր» պարբերական թերթերը և հասարակական խոդիրների վիճարանութեան ու քննադատութեան նիւթ տալիս:

ուսանողները գտղափարական զբաղմունքով ոգեւորուելով մոռանում էին ուսանելը. ոչ. նոքա ուսման մէջ ևս յառաջադէմ էին և շատերը նոցանից գովասանքի էին արժանանում գերմանացի ուսուցչապետներից. իսկ Գերմանիայի ուսանողները և առ հասարակ այն շրջանները, ուր մոռաք ունեին հայ ուսանողները, միշտ համակրանքով էին վերաբերում վերջիններիս և մինչև այժմ էլ գեռ շատերը Դորպատում մեծ յարգանքով ուրախութեամբ են լիշում նախկին հայ ուսանողների անունները *):

Դորպատի հայ ուսանողութեան այս ամենածաղկեալ շրջանումն է մուտ գործում պատանի Գէորգը Դորպատ և միանգամայն շուարում. բոլորովին նոր աշխարհ է բացում հետաքրքրուող նորեկի համար։ Հենց առաջին քայլափոխին նա այնպիսի տպաւորութիւններ է ստանում, որ անջինջ կերպով դրոշմւում են նորա սրտի վրայ։ Այդ նոր շրջանի մէջ նա սկզբումը ճընշուած է զգում իրեն և մինչև անգամ ամաչում է... նորա հարցումներին հայերէն են պատասխանում և այն էլ այնպիսի հայերէն, որ բոլորովին տար-

*) Խաչատուր Աքովեանի 'և Ստեփաննոս Նազարեանից լետով Դորպատի ուսանող են եղել՝ Ազափիրեան լետով եպիկոպոս, ուսուցիչ և թարգմանիչ եւրոպական կրօնական երկերի. Փափազեանց ուսուցիչ—Դանիէլ Խատիսեանց—ուսուցիչ և հեղինակ. Գէորգ Աքիմեանց—թարգմանիչ ու հասարակական գործիչ—Մարկիանոս Խօսիկնեանց—թշկապետ. Աւագեանց, Գ. Միրիմանեանց—հալոց առջիկների հեղինակը—Սիքալէլ Փրի. դոնեանց—ուսուցիչ.—Պետրոս Սիմէօնեան—ուսուցիչ ու խօմբագիր.—Քերովք Պատկանեան—դիտնական և ուսուցչապետ. Ռաֆալէլ Պատկանեան—Գամառ. Քաթիպա՝ լայտնի բանաստեղծ. Գողոխեան—ծիծեռնակի հեղինակը—Վ. Ասկարեան. Նազարէգեան—այս երկու ուր վախճանուել են Դորպատում և այնտեղ թաղուել լուաերականների հանգստարանում.—Տէլ Պետրոսեան, Տէլ Միքալէլեան, Փողինեան, Խուբեան, Շարուեան, Պեղինեանց, Սիք. Ամատունի. Պազարեան Աղէք. Ռօտինեան, Ս. Աքիմեան, Գէորգ Բարիխուղարեան։

Սոքա եղել են Դորպատում մինչև 1857 թ. սոցանից ումանց բնորոշ դերն արաջ է բերում Աղէք. Ռօտինեանը «Դորպատեան հայ ուսանողաց կեանքից» բանասիրական լողուածում. Արձագանք 1892 Ն 107, 108 և 110.

բերւում էր Թիֆլիզի բարբառից. բայց երկար չէ տեւում նորա տարտամ դրութիւնը, հին ուսանողները օգնութեան են հասնում, նա կարգում է հայերէն, սովորում նոյն աշխարհաբարը գերմաներէնի հետ զուգընթացաբար և հետզհետէ վարժուելով ուսանողական աւանդական սովորութիւններին, մասնակից է լինում հայրենակիցների գաղափարական խորհրդածութիւններին և կամաց կամաց նորա սիրտն ևս նոյնպիսի ոգևորութիւն է զգում: Նա լեզուներ սովորելու մեծընդունակութիւն է ցոյց տալիս և համեմատաբար կարճ միջոցում այնքան լատիներէն է սովորում և այնչափ տիրապետում գերմաներէն լեզուին, որ տարուալ վերջը քննութիւն տալով՝ մտնում է համալսարան իբրև իւկական ուսսանող. Սակայն անխոնչ աշխատանքը որքան որ կրթում է նորա հոգին ու միտքը, այնչափ ևս վատ ազդեցութիւն է ունենում նորա աչքերի վրայ և մէկ աչքը այնքան է տկարանում, որ բժիշկները կատարեալ կուրութիւն նախատեսելով՝ վճռական խորհուրդ են տալիս՝ թողնել ամեն տեսակ գրաւոր պարապմունք: Համալսարանի լայտնի ակնաբոյժի այս վճիռը կտոր-կտոր է անում ուսումնածարաւ սիրտը, որ գեռ մօտ 18 տարեկան հասակումն էր: Ուսանողներից մէկն այս տարաբաղդ լուրը հաղորդում է Գէորգի ծննդներին և մի տխուր օր նա նամակ ու ճանապարհածախք է ստանում ծննդներից, որոնք թախանձում են նորան անմիջապէս հայրենիք վերադառնալ: Խեղճ ուսանող. նորա բոլոր ծրագիրները տակն ու վրայ են լինում. որքան ծանր պէտք է թուար նորան՝ թողնել համալսարանը, քաղաքակիրթ զրջանը, սիրելի դարձած հայ ուսանողներին թողնել այն մթնոլորտը, որ այդ մօտ երկու տարուալ կարճ ժամանակամիջոցում այնքան լեզափոխիչ ազդեցութիւն էր ունեցել նորա հոգեկան աշխարհի վրայ, այնքան գաղափարներ ներշնչել նորան, այնքան տոգորել նորա միտքը...: Սակայն պէտք է համբերութեամբ տանէր ճակատագրի հարուածը, հաժարուէր այդ բոլորից և սիրտը կոտրած վերադառնար հայրենիք՝ իւր ծննդների գիրկը: Մօտ երկու տարի առաջ որչափ ցնծալի լոյսերով էր թողել նա Թիֆլիզը և

ալժմ որպիսի հոգեկան թախիծով և մտատանջութիւններով է նորից ոտք կոխում իւր հալրենի քաղաքը՝ 1853 թ. աշնանը Բարխուդարեանը հասնում է Թիֆլիզ:

ՎՌ

Թիֆլիզում Բարխուդարեանը մի առ ժամանակ զբաղում է միմիայն իւր աչքերը բուժելով և մասնաւոր դասեր տալով: Խսկ երբ աչքերի տկարութիւնը մասմբ անցնում է, նուիրուում է գերմաներէն դասական գրքերի ընթերցանութեան և մի և նոյն ժամանակ քննութեան պատրաստուելով՝ 1855 թ. ձեռք է բերում գաւառատկան ուսուցչի ցենզ և հետևեալ տարին նշանակում է Հին-Նախիջևանի գաւառական դպրոցի ուսուցչէ: Այս պաշտօնը նա վարում է մինչև 1863 թ. և տեղափոխուելով Թիֆլիզ՝ նշանակում է գիմնազիայի վերակացու, իսկ 1866 թ. Դուշեմիթի ուսումնարանի տեսուչ և մօտ երկու տարի վարելով այդ պաշտօնը՝ բոլորովին թողնում է պետական ծառայութիւնը:

Բարխուդարեանը պետական ծառայութեան գործունէութեան շրջանում ևս ազատ ժամերը նուիրում է գրականութեան. նա ընթերցանութեան շնորհիւ բաւականին ծանօթանալով հայ հին և նոր սակաւաթիւ մատենագիրների հետ՝ փորձում է ինքն էլ գրել: Սկզբ քում նա գրում է ոտանաւորներ և կեանքից վերցրած վիպական պատկերներ. այդ գրուածքները մնում են անտիպ, որովհետև այդ միջոցին ոչ մի պարբերական հրատարակութիւն չկար ամբողջ Ռուսաստանում, ուր կարող լինէր նա զետեղել իւր գրչի առաջին փորձերը: Եւ ահա, երբ 1858 թ. Ստեփաննոս քահանակ Մանդինեանցը ձեռնարկում է հրատարակել «Մեղու Հայաստանի» «քաղաքական, բանասիրական և առևտրական լրագիրը», լունուարի 1-ին լուս տեսած հէնց առաջին համարում տպագրուում են Գ. Բարխուդարեան ստոքագրութեամբ հետևեալ չորս ոտանաւորները:

I. ԱԹԱԿ. Հաւատարմութիւն, կամ գող և շուն:

II. ՕԹՈՒՑԻ ԵՐԳ:

III. ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ *

IV. ՓՈԹՈՐԻԿ.

Այս ոտանսաւորներից առաջինը հառակա երևի բանաստեղծի առաջին փորձերից մէկն է, որովհետև թէ բանաստեղծութիւնը շատ թոլլ է և թէ լեզուն շատ անհարթ. բովանդակութիւնը շան հաւատարմութիւնն է, որ չէ թոլլ տալիս գողին մօտենալ տիրոջ բնակարանին՝ չխաբուելով նորա, իբրև կաշառք առաջարկած, մի կտոր հացեց. առակի բարոյականն արտայալտուած է վերջին տունով.

«Ինչքան ամօթ է ծառալին,
Անբան շանմէն անպէտ լինին.
Նև մէկ փողի օգտի համար.
Տիրոջը՝ թշշնամուն ծախեն».

Երևի հեղինակը ինքն էլ վերջը չհաւանելով իւր գրչի ալս թոլլ փորձը՝ չէ զետեղել իւր «Բանաստեղծութիւնների ժողովածուի մէջ, որ տպագրուեց 1897թ. **)

«Օրօրոցի երգը» չորստողեան 13 տնից բաղկացած ոտանաւորը նոյնպէս անհարթ է և ժողովածուի մէջ լուս է տեսել փոփոխուած. 9 և 10-րդ տները սկզբնական ձևն է.

«Քո բոլոր սրտով
Դու նրան միշտ սիրէ,
Որ իւր պինդ ձեռով
Աշխարք կըտիրէ:
Երբ ալս կատարես,
Էլ մի վախենար,
Թէ զու կըլինես
Զար հոգոյն աւարց,
Քանի սուրբ հրեշտակ,
Քո կողքին կանդնած»...

Ժողովածուի մէջ այդ տողերին փոխարինում են.

Սրտումդ պահիր
Աստուծու սէրը
Նա է որբերի,
Պաշտպանն ու տէրը».

*.) Մեզու Հալաստանի 1858 ա. տարի № 1.

**) Գէսրդ Բարիուդաբեանցի ԲԱՆԱՍՏԵԼՇԱԽ-ԹԻՒՆՆԵՐԸ Թիֆլի. 1897.

թէ նորա կամքը
Դու միշտ կատարես,
Աշխարհքում դու
Երջանիկ կապես:
Եւ քո սուրբ հրեշտակ,
Որ մօտդ կանգնած,... *)

«Առ Հայաստան»ը Բարխուղարեանը գրել է առաջին անգամ Հին-Նախիջևան գնալու ժամանակ ճանապարհին. այս ոտանաւորից, որի արտաքին ձևը թէւ կոկ չէ, բայց արտայալում է երիտասարդ բանաստեղծի հալլենասիրական զգացմունքը, երևում է Դորպատի և Խաչատուր Աբովյանի ազգեցութիւնը:

«Փրոթորիկը ամենից լազողուածն է՝ թէ ներքին ըրովանդակութեան, թէ բանաստեղծութեան և թէ լեզուի կողմից. կարդացում է դիւրութեամբ և հաճուքով. նկարագրութիւնն ևս բնականին համապատասխան: Գրուածքի բարոյականն է.

«Ակսպէս եղբարք մեր կեանքում
Շատ կըսեսնենք մըրիկներ,
Բայց մենք ունինք երկնքումը
Բարի հալր, նա է տէր մեր...»

Վերջին երկու տողերը ժողովածուի մէջ փոխուած են ալսպէս.

«Զվատինք, մըրիկներին
Կը հետեին պարզ օրեր» **)

«Մեղու Հայաստանիկ առաջին համարից յետոյ Բարխուղարեանն ալլ ևս չէ աշխատակցում այդ թերթին. թէ ինչու, լայտնի չէ: Երեսի թերթի ուղղութիւնից է զժգոհ մնում. այս դժգոհութիւնը նա արտայատում է շատ խիստ բառերով 1859 թ. մայիսի 8-ին Հին-Նախիջևանից «Հիւսիսափալլի» խմբագիր Ստեփաննոս նազարեանին գրած մի նամակով, որ տպուած է «Հիւսիսափալլի» լուկիսի համարում: Նամակագիրը յայտնելով, որ ուղարկում է «Հիւսիսափալլի»ն չորս ոտանաւոր, ասում է. «Առաջին անգամը կարդաց հասարակութիւնը իմ անունը թշուառ Մեղուկ 1 համարումը 1858 թ., բայց ես շուտով վերջացրեցի ամենալն հաղորդակ-

*) Նուն էջ 46.

**) Նուն էջ 51.

ցութիւն նորա հրատարակչի հետ, տեսնելով նորա լրագրի ոչնչութիւնը: Այժմ դառնալով գէպի ջեզ, կամենում եմ իմանալ, արդեօք արժանի են իմ աշխատութիւնքը որ և իցէ ուշադրութեան հասկացող մարդերի կողմից, թէ ժամանակ է արդէն դադարել թուղթը ի զուր տեղ սեւացնելուց: Իմ ոտանաւորները ընդունվելով Մեղուի մէջ, ես առաւել տեղիք ունիմ կասկածելու նոցա արժանաւորութեան մասին, քան թէ այն ժամանակ, երբ որ մերժվելու էին նորանից... Վերջն աւելացնում է. «Եթէ տեսանեմ որ ընդունելութիւն գտանեն այս ոտանաւորները Զեր օրադրի մէջ, այն ժամանակ վստահանալով կուզարկեմ մի քանի աշխատութիւնք հանդերձ մի պատմութեամբ, որ մակագրած է Գոդէնս Քոռնթալէր, թարգմանութիւն գերմաներէնից (գործ Ռինիցի)» *):

Բարխուդարեանն իբրև Դորպատեան դպրոցի անդամ և հետեւող հարկաւ պէտք է աւելի համակրէր Ա. Նազարեանի ուղղութեան, քան թէ «Մեղու Հայաստանի» Սակայն մի հանգամանք անբացատրելի է մընում. թէ «Հիւսիսափալլը» Մոսկուայում և թէ «Մեղու Հայաստանին» Թիֆլիզում միաժամանակ են սկսում հրատարակուել, միևնուն 1868 թ. առաջինն իբրև ամսագիր, երկրորդն իբրև շաբաթաթերթ: Սպասելի էր, որ Բարխուդարեանն իւր առաջին փորձերն ուղարկէր Հիւսիսափալլին. սակայն «Մեղուին» է տալիս և մօտ տարի ու կէս անցնելուց լետոյ է անցնում «Հիւսիսափալլին» այնպիսի թունդ արտայատութիւններով: Եւ երկի ալդ թունդ խօսքերն էլ բաւականին նալաստում են, որ Ա. Նազարեանը գովում է իւր նոր աշխատակցին ասելով. «...Պ. Բարխուդարեանցի նամակը ցուցանելով իւր մէջ առողջամիտ գաղափարներ, քաղցր պարտականութիւն ենք համարում մեր վերալ դարձուցանել՝ ասարակութեան ուշադրութիւնը ալդ մտածող և քանքարաւոր հայի վերալ, մանաւանդ այնպիսի հեռաւոր ասիական անկիւնում: Ոտանաւորների թարգմանութիւնը ևս ակնյալանի վկալում է, որ Հեղինակը

*) «Հիւսիսափալլ» 1859. լուլիս հ. էլ 570.

ջերմ ու տաք սըտով զգացել է գերմանական բանա-
ստեղծի հետ» *):

«Հիւսիսափալի» այդ համարում տպագրուած Գ.
Բարխուդարեանի չորս ոտանաւորները հետևեալներն են.

1. Պատանին աղրիւրի մօտ.

2. Յովհաննայի հրաժարվիլը.

3. Կորած սէրը.

4. Խօսակցութիւն լուսնակի հետ:

Առաջին երկուսը թարգմանութիւն են Շիլլերից,
իսկ վերջին երկուսը ինքնուրուն։ Այս թարգմանութիւն-
ները տպագրութեամբ առաջինը լինելով և Ս. Նազա-
րեանի գովասանքին արժանանալով՝ առիթ են տալիս
մեզ մի փոքր երկար խօսել դոցա մասին։ Պատանին
աղրիւրի մօտ **) Շիլլերի երրորդ շրջանի, ուրեմն և
ամենահասուն ժամանակի փոքրիկ սիրուն ստեղծագոր-
ծութիւնն է և գեղարուեստորէն նկարագրում է մի
պատանու անյաջող սէրը։ Ոիրու անյաջողութիւնն, ինչ-
պէս պարզ երևում է ոտանաւորի վերջին մասից, ա-
ռաջանում է այն հանգամանքից, որ սիրուած օրիորդը
ապրում է շքեղ դղետակում, ուրեմն և հարուստ կամ
բարձր դասակարգից է, իսկ սիրահարուած պատանին
ասում է։

Raum ist in der kleinsten Hütte

Für ein glücklich liebend Paar.

անրջանիկ սիրող մի զուգի համար

Տեղ կալ ամենափոքր խրճիթում տնգամ։

ուրեմն հարուստներից չէ։

Ոտանաւորի հայերէն թարգմանութիւնը շատ
անհարթ է. ընդհանուր տպաւրութիւնը թոյլ և տեղ
տեղ չէ արտայատում այն, ինչ որ ասում է Շիլլեր.
Օրինակ—Շիլլերը գրում է.

Fraget nicht, Warum ich traurig,

In des Lebens Blüthenzeit!

*.) «Հիւսիսափալի» 1859. լույս. էջ 569.

**) «Ժողովածուի» մէջ պ. Բարխուդարեանը փոխում
է արտպէս, պատանին վտակի մօտ։ Գերմաներէն բնա-
գիրն է։ «Der Jüngling am Bach»։ «Bach» բառի ճիշտ նշա-
նակութիւնը ոչ աղրիւր է, ոչ էլ վտակ. ալ առուակ, առու։

Alles freuet sich und hoffet,
Wenn der Frühling sich erneut.»

Որ նշանակում է. «Մի հարցնէք թէ ինչու եմ ետարտմում ծաղկափթիթ հասակում. ամեն բան (կամ ամեն ոք) ուրախանում և լցուում է լուսով, երբ գարունն է վերանորոգւում»: Այս հատուածի բովանդակութիւնը մեր թարգմանիչն արտալաւել է ալսպէս.

«Մի հարցնէք, իր եմ սգում.

Մատազ կեանքս ծաղկելով,

Ուրախութիւն, լուս է զգում.

Բնութեան գարունը դալով»:

Որից պարզ չէ երևում թէ ով է զոյս զգում»:
Կամ թէ կարող է հասկացուել, որ մատաղ կեանքն է զոյս զգում», որ հարկաւ ճիշդ չի լինի¹¹⁾:

Թարգմանիչը շարունակում է.

Գարնան բերած ուրախութիւն

Պէտք չէ ինձ. ինչ եմ առնում.

Մինին եմ ես միշտ որոնում,

Նա ինձ մօտ է, միշտ հեռուս...¹²⁾

Հարկաւ մութն է վերջին տողը, որովհետև մօտաւ և «հեռուա իրար հակասող գաղափարներ են և միաժամանակ երկուսը միասին չեն կարող միևնոյն լարաբերութեամբ տեղի ունենալ»: Նիլէրն ասում է.

„Sie ist nah und ewig Weit.“

Ալսինքն նա մօտիկ է և մշտնջենապէս հեռուա. միտքն ալն է, որ թէև նա տարածութեամբ մօտիկ է, բայց որովհետև իրեն անհասանելի է, ուրեմն և մըշ-

*) Այս հատուածը «Ժողովածուի» մէջ վերամշակուած է ալսպէս.

«Մի հարցնէք, իր եմ սգում,

Մատազ կեանքս ծաղկելիս,

Ուրախութիւն, լուս է զգում

Բնութիւն, գարունը դալիս»:

տես. Գ. Բ. բան. ժող. էջ 192

**) Ժողովածուի մէջ ալս տունը փոխուած է ալսպէս.

Ուրախութիւնն ինձ համար չէ,

Որ չնորհում է գարունը.

Ա'ն, ինձանից միշտ հեռու է

Սրախ. ընտրած սիրունը»: ժող. էջ 193...

տնջենապէս հեռու է իրենից։ Մի քանի բառեր էլ բանաստեղծական ազատութեամբ են թարգմանուած։ օրինակ. «Ungestillt», որ նշանակում է երիտասարդութիւն կամ պատանեկութիւն, թարգմանուած է մանկութիւն։

Թառամում է մանկութիւնս,
ինչպէս ալս ծաղկանց պատկ։

«Ungestillt» բառը, որ նշանակում է չլագեցած կամ չխաղաղուած, թարգմանուած է «անդարման»։

«Սի չեմ կարող հասնել նորան, Սիրոս մնում է անդարման»։

2. Յովհաննայի հրաժարուիլը «Օրլէանի կոյսը» ոգեսրութեամբ լի գրուածքի այն սիրուն մենախօսութիւնն է, որ կազմում է «պրօլօգի» վերջաբանը, ուր Յովհաննա դԱրկը հրաժեշտ է տալիս իւր հովուական կեանքին։ Հրաժեշտ բառի տեղ թարգմանիչը գործ է ածել «հրաժարուիլ», որ տարբեր իմաստ ունի։

Այս մենախօսութեան թարգմանութիւնը համեմատաբար աւելի լաջող է, բայց մի քանի տեղ դարձեալ իմաստի արտալայտութեան անճշգութիւններ կան։ օրինակ ոգին պատուիրում է Յովհաննային։

„In rauhes Erz sollst du die Glieder schnüren,
Mit Stahl bedecken deine zarte Brust,
Nicht Männerliebe darf dein Herz berühren
Mit stünd'gen Flammen eitler Erdenlust.“

Որ նշանակում է։ «կոշտ մետաղով պէտք է կտպկալես անդամներգ, պողպատով ծածկես քնքոլշ կուրծքդ. տղամարդու սէրը չպէտք է շօշափէ քո սիրտը՝ աշխարհալին ունալին ցանկութեան լանցաւոր տենչանքով։ Վերջին տողերի միտքը պարզ է։ Յովհաննային պատուիրում է ոչ մի տղամարդու հետ սիրոյ լարաբերութիւն չունենալ։ Սակայն թարգմանիչ բանաստեղծի տողերն այդ չեն արտալայտում։ նա ասում է։

«Մարմինդ պատիր ծանր զրահով,
Պողպատով ծածկիր քո ֆափուկ կուրծքդ.
Մարդկալին սէրը ունալին իղձերով
Չվառէ երբէք անարատ սիրտդ»։

«Մարդկալին. սէրը բոլորովին ոլլ գաղափար է։
Քան աղամարդու սէրը։
և իրէք չծաղկի ճակատդ պատկով։

«Պատկովք բառը նոյնպէս անորոշ է. Յովհաննա-
յին չեն արգելում դափնեալ կամ ծաղիկների պակով
զարգարել ճակատը. Նիլէրի խօսքը «Հարսանեաց պլա-
կի»—Երաւեկրան—մտօին է:

«Կը քանդես նրա բաղդի անիւը»,
«Բաղդի անիւը քանդելը անիմաստ դարձուածք է.
Նիլէրն ասում է.

«Ստավալզեն արտ անիւը գուրա բաղդի անիւը»:
այսինքն «կղարձնես (կղլորես) գու նորա բաղդի անիւը»:
«Մնաք բարով ծմակներ և ցուրտ աղբիւներու»:
«Ճմակներ» բառը գրուած է Նիլէրի Grotten բառի գի-
մացը, որ նշանակում է անձաւ, քարայր և այլն:

Մենք հարկաւ հեռու ենք այն մտքից, որ պահան-
ջենք թէ բանաստեղծութիւնը պէտք է բառացի թարգմա-
նել, սակայն անհրաժեշտ ենք համարում, որ բանաս-
տեղծի մնցենք ճշգութեամբ և նոյնութեամբ արտա-
յալտուին: Այս դէպքում մենք բարխուղարեանի հայե-
րէնի վերաբերմամբ խստապահանջ չենք, որովհետեւ
նույնութեամբ աշխարհաբարը դեռ շատ ան-
մշակ էր:

Զնայելով երիտասարդ բանաստեղծի թարգմանու-
թեան այս թերութիւններին, մենք լիովին արդարացի
ենք գտնուալ Ս. Նազարեանի ասածը՝ թէ բարխուղա-
րեանը «ջերմ ու տաք սրտով զգացել է գերմանական
բանաստեղծի հետ»:

Ինքնուրոյն ոտանաւորներից «Վորած սէրը» սիրու
վիշտն է լալիս, որովհետև

«Վարդուհիս, հրեշտակ աղջիկը
Դեռ չապրած վախճանեցաւ *),

Այս ոտանաւորի մէջ իսկապէս բանաստեղծութիւն չկայ,
այլ մի պատմութիւն՝ տաղաչափութեամբ գրուած: Այս
տեսակէտից աւելի լաջող է երկրորդ ոտանաւորը «Խօ-
սակցութիւն լրանակի հետո: Ալսեղ մուզան մի փոքր
ժպտացել է ուսուցիչ-բանաստեղծին. նա աւելի համար-

*) Հիսիսափառ: 1859. լուկիս. էջ 573—574. «Ժողովա-
ծուին մէջ ալտ ոտանաւորը լուս է տեսել համարա ամբողջովին
փոփոխուած և «Թանկագին կորուս տ» վերտառութեամբ:
«Ժողովածու», էջ 35:

ձակութեամբ է գրիչ զարժել և զանազան պատկերներ նկարել. այդտեղ թէ ծերունին է աղօթում աշխարհի համար, թէ բանուըն է անքուն տանջում, թէ մալրն է քնքով սիրով զաւակին քնեցնում, թէ գողն է յանցաւոր մտքով մի տուն մտնում և թէ՝

«Ճեննում ես նոյնպէս դու կանաչ արգում

Քո մեղմիկ լուսով թուլ լուարուած,

Երկու սիրական միասին նստած

Վարդի թփի մօտ սիրախօս լինում *).

Նոյն 1859 թ. «Հիւսիսափալլի» յաջորդ ամսաթերթերում միայն մի գրութիւն ենք գտնում Գ. Բարխուդարեան ստորագրութեամբ. այդ մտածութիւնը վերտառութեամբ ոտանաւորն է՝ տպուած հոկտեմբեր ամսաթերթում։ Այս չափաբերական գրուածքից երեսում է պարզ, որ այդ միջոցին Բարխուդարեանն արդէն լաւ ուսումնասիրել էր հայ ազգի անցեալ պատմութիւնը և ժամանակակից գրութիւնը. արդէն թախիծը պատում է նորա սիրաը և արտայալուում գրուածքի տողերում։ Մտածութիւնքը սկսում է այսպէս.

«Խորին արտութիւն և դառն վիշտը
Ճնշում է անձս և մաշում հոգիս.

Արիւն է պատում իմ զգալուն սիրտը,

Տեսնելով թշուառ դրութիւնը ազգիս,

Ո՞վ իմ հարցենիք, խղուկ Հայաստան,

Մինչև Երբ արդեօք արդպէս պիտի մնաս,

Եւ երգիչներիցդ դու միշտ լաւիտեան

Միաւն լաց և ողբ պիտի իմանաս։»

Այնուհետեւ դիմելով ազգին՝ հարցնում է թէ մինչև Երբ պէտք է մնայ քնած գրութեան մէջ և աւելացնում՝ թէ բաւական է, պէտք է թօթափել քունը, չորս կողմը նայել, լիշել անցեալ փառքը և կորստաբերթմութիւնից զարթել։ Բայց լոյսը չէ կորցնում, ոգեւորւում է և լաւ ապագայ գուշակում։

Երկինքը նոր կեանք է վիճակել քեզ,

Ապագալումը և պաճառ օրեր։

Մտածութիւնքը վերջանում է մի ներբողով՝ ուղ-

*) Հիւսիսափալլ, նոյնը, էջ 575—576. Այս բանաստեղծութիւնը ժաղովածուի մէջ տպուած է շատ քիչ փոփոխութեամբ—մի քանի բառեր միայն սրբագրուած են—լուսն եակ ի ն վերնագրով։

դրուած այն ժամանակուալ կաթողիկոս վեհափառ վշտա-
լի Մատթէոսին.

«Եւ ասսուածընաիր քո բարի Հայրը
Քահանապապետ Տէր Մատթէոսը,
Նա քեզ ցուց կտալ այն ճանապարհը,
Որով պիտի գնաս դու դէպի լուսը» *).

Ինչպէս առաջ բերած հաստուածներից էլ կնկատէ
ընթերցողը, Բարխուդարեանի մուգան «Մտածութիմք»ի
մէջ ևս բացակայ է. այստեղ կալ լոկ զգացմունք, վիշտ
և լոր՝ արտայարտուած անպանոյն խօսքերով և ազգա-
սիրական ոգւով, բայց բանաստեղծութիւն, մաքի թռիչք՝
չկայ:

1860 թ. Հիւսիսափալլի Յ-ըդ համարում տպուած է
«Քուիտին», անոնը կրող մի վէսլիկ, որ թարգմանուած
է Բարխուդարեանի ձեռքով գերմաներէնից և նուի-
քուած թժիշկ Յարութիւն Յովհաննիսեանցին **):

Թէև յալտնի չէ թէ Քուիտինը ում հեղինակու-
թիւնն է, սակայն գրուածքը ընթերցանութեան սիրուն
նիւթ է, հոգեբանական մոմէնտներով լի. ներկայաց-
նում է հոյանդացի պատանի զինագործ—նկարիչ Քուի-
տինի հոգեկան գրական և առաքինի լատկութիւնները
և նրա գլխին եկած արկածքները: Որչափ որ վէպի-
կի նիւթը հետաքրքրական և խրատական կողմեր ու-
նի, այնչափ ևս թարգմանութեան լեզուն ծանը և
խրթին է, լի գրաբըր բառերով և ձևերով: Բարխու-
դարեանը կարծես երկու աշխարհաբար լեզու է գործ-
ածում: Նրա ինքնուրուն ոտանաւորները պարզ և սա-
հուն, թէպէտ ոչ ճոխ, ոճով են գրուած մեծ մասամբ,
իսկ այս թարգմանութիւնը հակառակն է:

Հիւսիսափալլի նոյն թուի 4-րդ համարում գտնում
ենք Բարխուդարեանի մի փոքրիկ թարգմանութիւնը
«Փորձիչը վերնագրով ***): Փորձիչը արևելեան բնորոշ

*) Հիւսիսափալլ 1859. հոկտեմբեր. էջ 806—807. Ակա-
դեմանաւորը «Ժողովածուխ» մէջ տպադրուել է միմիալն վեր-
ջին հատուածի ամբողջական փոփոխութեամբ արդտեղ ալ
ևս չէ լիշում Մատթէոս կաթ. անոնք: Ժողովածու էջ 77—79.

**) Հիւսիսափալլ. 1860. № 3. էջ 165—207.

***) Նոյն. 1860. № 4. էջ 263—270. գերմաներէն բնա-
գիրը տպուած է «Hellermagasin» օրագրի 1840 թ. № 21, 22.

չատկութիւն կրող մի զրոյց է, վերցրած Երուսա-
ղէմի հրէաների կեանքից. բաբեի Աբիմելէքը, որ լալա-
նի է ամբողջ քաղաքում իբրև սրբակեաց և բարեգործ
մարդ՝ մի անգամ մեծամտութեամբ խուսափում է մի
լանցաւոր աղքատից, որի բոլոր լանցանքն այն էր, որ
օրէնքի հակառակ գինի էր խմել. աղքատը հասկաց-
նել է տալիս նրան, որ թող ալդքան չհպարտանալ,
արովհետև կարող է պատահել, որ ինքն էլ փորձանքի
մէջ ընկնի: Այս խօսքերի տպաւորութեան ներքոյ րաբ-
քին երազի մէջ փորձանքի է ենթարկում և մարդ-
սպաններով բանտարկում է: Արթնանարով նա զգում է,
որ ամեն մարդ կարող է փորձանքի ենթարկուել և
թողնում է իւր մեծամտութիւնը: «Փործիչը», ինչպէս
ասացինք, արևելեան զրոյցի նմանողութեամբ է շա-
րադրուած և ոչ մի առանձին արժէք չունի՝ ոչ գեղա-
րուեստական և. ոչ էլ բարոյական տեսակէտից: Գալով
հայերէն թարգմանութեան, աւելի պարզ և մաքուր
աշխարհաբարով է թարգմանուած, քան «Քուիտին»ը:

Հիւսիսափալիի նոյն տարուալ 6-րդ համարում ե-
րեք փոքրիկ հատուածներ կրում են Բարխուդարեան
ստորագրութիւնը. մէկը արձակ թարգմանութիւն է
գերմաներէնից Ալուրովիկոս սասներէնինգերորդը Ստրաս-
բուրգի մէջ՝ վերնագրով *), իսկ երկուսը փոքրիկ բա-
նաստեղծութիւններ են:

Արձակ թարգմանութեան նիւթը մի զրոյց է՝ թէ
ինչպէս Ստրասբուրգ քաղաքը արտաքին մեծ շքեղու-
թեամբ ընդունելով Լուդովիկոս X V -ին՝ գաւադրութիւն
է սարքում նրա անձի դէմ և ալդ անլաջող չարագոր-
ծութեան փորձն անում է մի մանկահաս աղջիկ՝ տո-
գորուած իւր հայրենի քաղաքի ազատութեան գաղա-
փարով: Գրուածքը գեղարուեստական ոչինչ արժէք
չունի. թարգմանութիւնը գիւրութեամբ է կարդացւում:

Երկու փոքրիկ—մէկը բաղկացած է 4, միւսը 3
չորստողեան տուներից—բանաստեղծութիւններից առա-
ջինը կրում է «Նմանողութիւն Պուշկին բանաստեղծի»,

*) Հիւսիսափալի. 1860. № 6. էջ 424—432. բնագիրը
ապուած է նոյն «Hellermagasin» թերթի № № 48 և 49.

իսկ երկրորդը «Ազատ թարգմանութիւն Պուշկինից»; Երկուսն էլ սահման են. երկրորդն աւելի հաճութեամբ է կարգացուում: Այս առաջին տպուած փորձն է ոռւսերէնից և ոռւս հեղինակի գրուածքի թարգմանութեան և կարելի է ասել, որ լաջօղ է, մանաւանդ ազատ թարգմանութիւնը^{*)}:

«Նիւսիսիսփալի» 1861 թուի ամսատետրերի մէջ միայն չորս աշխատութիւն ենք գտնում Գ. Բարխուդարեանի ստորագրութեամբ. երեքն ինքնուրովն—«Առակ», «Զորս հսկայ» և «Առ իմ սիրելին»—չորրորդը թարգմանութիւն—«Փուլմինատիչ»: «Առակը ճիշտ ո՛ը մի իսկական հեքիաթ է չափաբերական ձեռվ գրուած և իւր բարդութեամբ՝ լոկ երևակայութեան արդիւնք: Նկարագրուած է մարդու և հրէշի մըցութիւնը և առաջինի լաղթանակը. հարուստ և ուրախ կեանք վայելող մի վաճառական ծանր հիւանդանալով՝ կորցնում է բոլոր գուքը և աղքատանում. կինը չկարողանալով տանել այդ թշուառ կեանքը, անգուժ կերպով արտաք-սում է հիւանդ ամուսնուն տանից.

«Մինչե երբ պիտի ալապէս չարչարուեմ,
Կեանքս մաշելով ես քեզ կերակրուեմ.
Վեր կաց, մարդ ես, գնահ, գլուխող քարին տուր
Քո զաւակներին ճարիր կերակուր»:

Խեղճ մարդը մի կտոր հաց վերցնելով՝ հեռանում է տանից և անտառում պատահելով՝ հրէշին՝ հետը մըցում է զանազան մտացածին հնարներով, փախցնում նորան և տիրանում նորա անթիւ գանձերին. այդ գանձերը ձիերին բարձած վերադառնում է կնոջ մօտ: Կինը ոսկու գանձերը տեսնելով՝ անմիջապէս հընուան. քով ընդունում է իւր արտաքսած ամուսնուն.

«Ոսկու անունը երբ կինը լըսեց,
Բաց արեց զուռը, մարդու վրալ վաղեց,
Փաթաթեց նորան իւր կաների մէջ,
Եւ հայբոլներին չէր երևաւմ վերջ» **).

^{*)} Այս երկու փոքրիկ ոտանաւորները լուս են տեսել «Ժողովածուի» մէջ մի երկու աննշան փոփխութիւններով: «Ժողովածու» էջ 122 և 123.

^{**)} Հիւանսափալ 1861. № 5. էջ 363—370. նոյնը և մժողովածուի» մէջ «Մարդ և հրէշը» անունով. էջ 103—113.

Նախորդ ինքնուրոյն ոտանաւորների վերջը բար-
խուղարեանը առաջ էր բերում գրուածքի բարուականը.
ալստեղ ալդ չկայ. ուստի պարզ չէ թէ հեղինակն ինչ
է ուզում ասել այդ առակով. արդեօք կնոջ անսրտու-
թիւնն է ուզում պատկերացնել՝ թէ մարդուս հնարա-
գիտութիւնն ու խելքը ջատագովել. Վերջինս աւելի մեծ
տեղ բռնելով հեքիաթի մէջ, հաւանակուն է, որ հեղի-
նակն ուզեցել է արտալատել մարդու խելքի գերազան-
ցութիւնը՝ կոսկիտ և կատաղի ուժի գէմ. «Առակուի լե-
զուն սահուն լինելով՝ մուտք է գործել հալոց լեզուի
գասագրքերի մէջ, չնայելով որ բաւականին երկար է
(270 տող):

«Չորս հսկայ» գրուածքը 18 ութողեան տներից
բաղկացած մի փոքրիկ տօէմս է չորս գիւցագունների
— Հալկ, Արամ, Տիգրան, Տրդատ — նկարտգրութեամբ,
որոնք՝

«Ամեն գիշեր մէջ գիշերին,

Այն ինչ խորին լուսթիւն

իշանում է, տիրում երկրին

և ննջում է բնութիւն.

Արարատի սարերի վրայ

Խորհրդաւոր ալդ ժամուն,

Բազմած սպիտակ ամժերի վրալ,

Գալիս են չորս Հալկագուն»:

Ասլա նկարագրում է ալդ գիւցագունների արտաքին
տեսքը լուզուած տօղերով.

«Նոցա հասակն է վակելուչ,

Լայն ու պինդ թիկունքները,

Դէմքերը զուարթ և աչալուրջ,

Հաստաբազուկ կռները.

Աչքերը կրակու և վառվառուն...»

Դոցա համառօտ պատմութիւնն անելուց լետոյ՝

«Հերքը սպիտակ ինչպէս ալն ձիւն,

Որ Մասեաց զլուխն է ծածկում»:

Դիւցագուններից ամեն մէկը խօսում է իր արածների
մասին և յանդիմանում ալժմեան հայերին, որ չեն կա-
րողացել պահպանել իրանց տուածները. Հայկը բացա-
գանչում է.

«Լաւ էր աղատ մեռանէիք,

Քան ապրէիք ալդպէս ստրուկ»...

Արամը դժգոհութիւն է լայտնում.
«Իմ մեծամեծ աշխատանքներն
Դուք անսպուղ կացուցիք»...”

Տիգրանը հաստատում է Արամի խօսքերը.
«Խօսքդ իրաւ է, պատուական մլր,
Տես իմ ազիտակ մաղերը...”

Քաջ Տրդատը ողբում է.

«Ախոսս, դու ինք ստեղծեցիր
Քո բոլոր դժբաղդութիւն...
Ի՞նչ օգուտ մեծ քաջութիւնը,
Երբ որ սրտերը մին չեն» *).

Այս գեղեցիկ, փոքրիկ գիւցազներդութեան մէջ թէ
բանաստեղծութիւն կալ, թէ միտք և թէ զգացմունք.
Մարդ ափսոսում է թէ՝ երբ բանաստեղծը կարող է այս-
պիսի շնորհալի բան արտադրել, ինչու է ժամանակ ու
աշխատանք կորցնում՝ «մարդ և հրէշի պէս առակ-
ներ պատմելու վրայ:

«Զորս հսկայ գրուածքն ապացուց է, որ Շելլէրի
ոգին արդէն ազդեցութիւն է ունեցել երիտասարդ բա-
նաստեղծի մաքի վրայ:

«Առ իմ սիրելին» չորս վեցտողեան տներից կազ-
մուած ոտանաւորը **) Բարխուտարեանի թոյլ գրուածք-
ներից մէկն է. մէջը աղ ու համ չկայ, այդ պատճա-
ռով և տպաւորութիւն չէ թողնում ընթեցողի վրայ:

«Ֆուլմինատին» - ծճմբառներ փոքրիկ, 9 էջից
բաղկացած, վիպական պատկերը, թարգմանուած է
գերմաներէնից ***) նիւթն առնուած է իտալական կեան-
քի այն ժամանակաշրջանից, երբ դեռ իտալական պե-
տութիւնը կազմուած չէր և Աւստրիացիք խիստ կեր-
պով էին պատժում անկախութեան ձգտող իտալացինե-
րին: Երկու հարազատ եղբայրների միմեանց դէմ ունե-

*) Հիւսիսամիալ. 1861. №. 9. էջ 226—228. նոյնը և «Ժողովածուին մէջ աննշան փոփոխութեամբ - աւելացել է ութ տողեան մի տուն - էջ 70—76.

**) Հիւսիսամիալ. 1861. №. 9. էջ 228. նոյնը և «Ժողով-
վածուին մէջ «Իւարձեալ նորան» էջ 8.

***) Հեղինակի անունը չէ լիշուած. բնագիրը տպուած է
եղել «Gartenlaube» գերմանական շաբաթաթերթի մէջ (1858.
№. 22):

ցած ատելութիւնը պատճառ է լինում մէկի գժըաղդութեան և միւսի զնդակահար լինելուն։ «Ձուլմինատին» թէւ հաճութեամբ է կարդացւում, սակայն մի առանձին արժէք չունի ոչ բարոյական և ոչ էլ վիպական տեսակէտից։ Թարգմանական լեզուն թէւ սահուն է, սակայն բնականաբար կրում է իւր ժամանակի գըրօշը։ —«տեսանում եմ», «ինձ պիտոյ է», «եղբօր մահուց լետոյ», «ծաղր առնել», «ապստամբողական մտածութեամբք», «անախորժ զգացութեան» և այլն։ *)

«Հիւսիսափալլի» 1862 թ. գեղարքունիքի №. գետեղուած են Բարխուդարեանի երեք աշխատութիւնները. մէկը թարգմանական, «Հայեացք ղէպի ազատ հոտալիա»։ Երկուսը ինքնուրուն բանաստեղծութիւն. —«Խօսք գէպի մի սիրուն» և «Կոլը երգիչը»։

«Հայեացք ղէպի ազատ հոտալիան» գերմանացի Աղօլֆ Շտարի իտալական ճանապարհորդութեան երկու փոքրիկ հատուածներն են։ Շտարը ճանապարհորդելով նոր կազմակերպուած իտալական պետութեան մէջ, —1861 թ. մեծ—ոգևորութեամբ է խօսում իտալական հանգամանքների մասին և գեղարքուեստական նկարագրութիւններով արտալայտիչ է հանդիսանում ազատ իտալացիների հայրենասիրական գաղափարների։ Արդէն լալտնի է, թէ իտալացիք որպիսի զոհաբերութիւններով ձեռք բերին հայրենիքի ազատութիւնը. ոգևորութիւնն այն աստիճանին էր հասնում, որ զէնքի անսովոր պատանիներն անդամ՝ թողնելով ծնողական տունը, փախչում, Գարիբեալդիի բանակն էին մտնում։ Այսպիսի պատանիներից մէկի մալրը գտնելով իւր զաւտկին Գարիբելդու բանակում, ուզում է յետ տանել նորան և զօրապետն էլ համաձայնում է, ասելով որ ալդ երեխան չի կարող մի որ և է օգուտ բերել գործին. պատանու հայրենասիրական զգացմունքը վիրաւորւում է և արտասուազին բացադանչում է. ուրեմն դրեցէք ինձ մի թնդանօթի մէջ և արձակեցէք գէպի Աւստրիացիքը, որ ալդպիսով գոնեալ կարողանամ մի վնաս տալ նոցա։ **)

*) «Հիւսիսափալլ»։ 1861. № 9. էջ 211—220.

**) «Հիւսիսափալլ»։ 1862. №. 12. էջ 249—257. գեր-

Այս լոգուտծի ընտրութիւնը յաջող է, սակայն ծանրութիւնը է թարգմանուած:

«Խօսոք դէպի մի սիրուն» բանաստեղծութիւնը նկարագրում է երիտասարդ գեղեցկուհու ժամանակի ընթացքում փոխուելն ու թառամելը և տարիքի աղդեցութիւնը. այս ստանաւորը յաջողուածների շարքում չկարելի դասել: *)

«Կոյր երզիշն ընդհակառակը բանստեղծական աւելութիւնը է գրուած և յուզում է ընթերցողի զգացմունքն ու սիրաբ:

«Երկու աչքով կօր ծերունին,

Զեռը տուած իւր որդուն,

Մի հասարակ ջութակ ձեռին

Ման է դալիս տանից տունու»

Որդին կանգնեցնում է ծերունուն մի հարուստի տանառաջ, որի պատուհանից ցած է նայում մի գեղեցիկ տիկին. ծերը երգում է. նախ ողբում է նա իւր կուրութիւնը և լիշում այն երջանիկ օրերը, երբ ինքն էլ ուրիշների նման վայելում էր Աստուծոյ տուած բարիքը.

«Եւ ի՞ համար պարձառ լուսով

Երբեմն արև փալլում էր,

Եւ հրաշալի բնութեան շքով

Եւ իմ աչքը զմալլում էր».

Բայց նա այնուամենալիւ չէ գանգստուում Աստուծոյ այդ պատժից, այլ վրդովլում է մարդկանց քարասը-ռութեան վրայ, որովհետև՝

Ալստուած շնորհաց ինձ մի զսարիկ,

Գեղեցկութեամբ չկար հատը.

Իաց անօրէն և չար մարդիկ

Խեցին ինձնից իմ քաղցը»

Ցետոյ նկարագրելով իւր գտաեր շնորհալիութիւնն ու առաքինութիւնը, ողբում է, որ մի մուշել գիշեր յափշտակում են նրան իրենից.

«Յուսահատված վաղում էր ապահովութիւնը»

Խարխատվելով դէս ու դէն.

Ա՛իս ես օդնել կարող չէի,

Եւ ծեր էի, կոլր, անդէնա».

մաներէն բնագիրը տպուած է Gartenlaube 1861. №. 6.

*) Նունը, էջ 258. «Ժողովածուիս մէջ նորնը տպուած է. «Սիրունին» վերնագրով. էջ 14—15.

Պատուհանից լսող գեղեցկուհին արտսուտում է, չուզում է. նա ճանաչում է իւր հարազատ խեղճ հօքը, Ընթեցողը սպասում է, որ ահա աղջիկը ցած կը վաղէ, կդրկէ իրեն որոնող դժբաղդ երգչին, սակայն բանաստեղծն այլ կերպ է մտածել.

«Նա վեր առաւ իւր քսակը

Եւ ցած ձգեց ծերուկին,

«Ահա հալրիկ, իմ խեղճ հալրիկ,

Ահա, առ քեզ հացի դին»:

Խեղճ ծերունին ճանաչելով աղջկալ ձալնը՝ բացագանչում է դառնագին.

«Դաստիկ, տուածդ հացի շատ է,

Դա դագաղլս կըլինի դին» *):

Միւս օրը թաղում են կոյր երգչին:

Որչափ որ այս չորստողեան 18 տներից կազմուած ոտանաւորը լաւ տպաւորութիւն է թողնում՝ թէ բանաստեղծական և թէ լեզուի ճկունութեան և սահուն լինելու տեսակէտից, ալնքան ևս զարմանալի է դորա մտքի հոգեբանական հակասութիւնը: Ծնորհալի և առաքինի աղջիկը, որ իրեն փախցնելու ժամանակ «հալրիկ օգնիր» է կանչում, երկար տարիներից յետոյ իբրև հարուստ տիկին ճանաչում է իրեն որոնող դբժբաղդ հօրը, լուզում է, լաց է լինում և... բաւականանում է միմիալն մի քսակ «հացի գին» տալով նորան:

ԻՍ. ԵԱՐՈՒԹԵՒՆԵԱՆՑ

(յաջորդ համարում)

Վայում առաջանակ առաջանակ առաջանակ
առաջանակ առաջանակ առաջանակ առաջանակ
առայն առաջանակ առայն առայն առայն առայն

*) Հիմասիսափառը. Նոյն, էջ 259. և աճողովածուց էջ 43